

Եվրոպական պայմանագրերի շարք՝ թիվ 164

«Կենսաբանության եւ բժշկության նվաճումների կիրառման առնչությամբ մարդու իրավունքների եւ արժանապատվության պաշտպանության մասին» կոնվենցիա. «Մարդու իրավունքների եւ կենսաբժշկության մասին» կոնվենցիա*

Օվիեդո, 4 ապրիլի 1997թ.

Նախաբան

Սույն կոնվենցիան ստորագրող՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները, այլ պետություններ եւ Եվրոպական համայնքը,

նկատի ունենալով Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից 1948 թվականի դեկտեմբերի 10-ին ընդունված՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը,

նկատի ունենալով 1950 թվականի նոյեմբերի 4-ի «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան,

նկատի ունենալով 1961 թվականի հոկտեմբերի 18-ի Եվրոպական սոցիալական խարտիան,

(*) «Եվրոպական միության մասին» պայմանագիրը եւ «Եվրոպական համայնք հիմնելու մասին» պայմանագիրը փոփոխող՝ 2009 թվականի դեկտեմբերի 1-ին ուժի մեջ մտած Լիսաբոնի պայմանագիր: Արդյունքում այդ ամսաթվից Եվրոպական տնտեսական համայնքին ցանկացած հղում պետք է դիտարկել որպես Եվրոպական միությանը վերաբերող:

նկատի ունենալով «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը եւ 1966 թվականի դեկտեմբերի 16-ի «Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը,

նկատի ունենալով 1981 թվականի հունվարի 28-ի «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան,

նկատի ունենալով նաեւ 1989 թվականի նոյեմբերի 20-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան,

հաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն իր անդամների միջեւ ավելի շատ միասնություն ապահովելն է, իսկ այդ նպատակի ապահովման մեթոդներից մեկը մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պահպանումը եւ հետագա իրագործումն է,

գիտակցելով կենսաբանության եւ բժշկության ոլորտներում արագ ընթացող զարգացումները,

համոզված լինելով, որ մարդ արարածին անհրաժեշտ է հարգել թե՛ որպես անհատ, թե՛ որպես մարդկային ցեղի անդամ, եւ գիտակցելով մարդ արարածի արժանապատվության ապահովման կարեւորությունը,

գիտակցելով, որ կենսաբանության եւ բժշկության ոչ ճիշտ օգտագործումը կարող է հանգեցնել մարդու արժանապատվությունը վտանգող գործողությունների,

հաստատելով, որ կենսաբանության եւ բժշկության ոլորտում առաջընթացը պետք է օգտագործվի հօգուտ ներկա եւ ապագա սերունդների,

ընդգծելով միջազգային համագործակցության անհրաժեշտությունը, որը կենսաբանության եւ բժշկության օգուտները հասանելի կդարձնի համայն մարդկությանը,

գիտակցելով կենսաբանության եւ բժշկության նվաճումների կիրառման արդյունքում առաջացող հարցերի հանրային քննարկումը խթանելու եւ դրանց տրվող պատասխանների կարելիությունը,

ցանկանալով հասարակության բոլոր անդամներին հիշեցնել իրենց իրավունքներն ու պարտականությունները,

հաշվի առնելով այս ոլորտում Խորհրդարանական վեհաժողովի կատարած աշխատանքը, այդ թվում՝ կենսաէթիկայի մասին կոնվենցիա մշակելու վերաբերյալ 1160 (1991) հանձնարարականը,

որոշելով ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են կենսաբանության եւ բժշկության նվաճումների կիրառման առնչությամբ մարդու արժանապատվությունը եւ անհատի հիմնարար իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու համար,

համաձայնեցին հետեւյալի շուրջ.

Գլուխ I. Ընդհանուր դրույթներ

Հոդված 1. Նպատակը եւ առարկան

Սույն կոնվենցիայի Կողմերը պաշտպանում են բոլոր մարդկանց արժանապատվությունն ու ինքնությունը եւ առանց խտրականության երաշխավորում են յուրաքանչյուրի անձեռնմխելիության եւ այլ իրավունքների ու հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքը՝ կենսաբանության եւ բժշկության նվաճումների կիրառման առնչությամբ:

Յուրաքանչյուր Կողմ իր ներպետական իրավունքով նախատեսում է սույն կոնվենցիայի դրույթներն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներ:

Հոդված 2. Մարդու գերակայությունը

Մարդու շահերն ու բարեկեցությունը գերակա են հասարակության կամ գիտության բացառիկ շահերից:

Հոդված 3. Առողջապահական ծառայությունների հավասար հասանելիությունը

Կողմերը, հաշվի առնելով առողջապահական կարիքներն ու հասանելի ռեսուրսները, անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում իրենց իրավազորության շրջանակներում պատշաճ որակի առողջապահական ծառայությունների հավասար հասանելիություն ապահովելու նպատակով:

Հոդված 4. Մասնագիտական չափանիշները

Առողջապահական ոլորտում կատարվող ցանկացած միջամտություն, այդ թվում՝ հետազոտություն, պետք է իրականացվի համապատասխան մասնագիտական պարտավորությունների եւ չափանիշների համաձայն:

Գլուխ II. Համաձայնությունը

Հոդված 5. Ընդհանուր կանոնը

Առողջապահական ոլորտում ցանկացած միջամտություն հնարավոր է միայն համապատասխան անձի ազատ եւ տեղեկացված համաձայնությամբ:

Համապատասխան անձը նախապես պատշաճ տեղեկություններ է ստանում միջամտության նպատակի եւ բնույթի, ինչպես նաեւ դրա հետեւանքների եւ ռիսկերի վերաբերյալ:

Համապատասխան անձը կարող է ցանկացած ժամանակ հեշտությամբ հրաժարվել իր համաձայնությունից:

Հոդված 6. Համաձայնություն տալու կարողություն չունեցող անձանց պաշտպանությունը

1. Համաձայն ստորեւ նշված 17-րդ եւ 20-րդ հոդվածների՝ համաձայնություն տալու կարողություն չունեցող անձի դեպքում միջամտությունը միայն կարող է կատարվել՝ ելնելով նրա անմիջական շահից:

2. Այն դեպքում, երբ օրենքի համաձայն անչափահաս անձը միջամտությանը համաձայնություն տալու կարողություն չունի, այդ միջամտությունը կարող է կատարվել միայն նրա ներկայացուցչի կամ իրավասու մարմնի կամ օրենքով նախատեսված անձի կամ մարմնի թույլտվությամբ:

Անչափահասի կարծիքը հաշվի է առնվում որպես նրա տարիքին եւ հասունության աստիճանին համաչափ հետզհետե որոշիչ դարձող գործոն:

3. Երբ օրենքի համաձայն չափահաս անձը հոգեկան հիվանդության, հիվանդության կամ համանման այլ պատճառներով չունի միջամտությանը համաձայնություն տալու կարողություն, այդ միջամտությունը կարող է կատարվել միայն նրա ներկայացուցչի կամ իրավասու մարմնի կամ օրենքով նախատեսված անձի կամ մարմնի թույլտվությամբ:

Համապատասխան անձը հնարավորության սահմաններում մասնակցում է թույլտվությունը տրամադրելու գործընթացին:

4. Վերոնշյալ 2-րդ եւ 3-րդ կետերում նշված ներկայացուցչին, իրավասու մարմնին, անձին կամ մարմնին նույն պայմաններով տրամադրվում են 5-րդ հոդվածում նշված տեղեկությունները:

5. Վերոնշյալ 2-րդ եւ 3-րդ կետերով նախատեսված թույլտվությունից հնարավոր է ցանկացած պահի հրաժարվել՝ ելնելով համապատասխան անձի լավագույն շահերից:

Հոդված 7. Հոգեկան խանգարում ունեցող անձանց պաշտպանությունը

Օրենքով սահմանված պաշտպանության պայմանները, այդ թվում՝ վերահսկողության, հսկողության եւ բողոքարկման ընթացակարգերն ապահովելու դեպքում հոգեկան լուրջ խանգարում ունեցող անձը կարող է առանց իր համաձայնության ենթարկվել հոգեկան խանգարումը բուժելուն ուղղված միջամտության միայն այն դեպքում, երբ առանց այդ բուժման նրա առողջությանը կարող է լուրջ վնաս պատճառվել:

Հոդված 8. Արտակարգ իրավիճակը

Եթե արտակարգ իրավիճակի հետեանքով համապատասխան համաձայնությունն ստանալ հնարավոր չէ, ապա ցանկացած անհրաժեշտ բժշկական միջամտություն կարող է իրականացվել անհապաղ՝ համապատասխան անձի առողջության շահերից ելնելով:

Հոդված 9. Նախկինում հայտնաձ ցանկությունները

Հաշվի են առնվում բժշկական միջամտության վերաբերյալ այն բուժառուի կողմից նախկինում հայտնաձ ցանկությունները, որը միջամտության պահին ի վիճակի չէ հայտնելու իր ցանկությունները:

Գլուխ III. Մասնավոր կյանքը եւ տեղեկություններ ստանալու իրավունքը

Հոդված 10. Մասնավոր կյանքը եւ տեղեկություններ ստանալու իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր առողջության վերաբերյալ տեղեկությունների առնչությամբ մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք ունի իր առողջության վերաբերյալ հավաքված տվյալների մասին տեղեկանալու իրավունք: Այդուհանդերձ, դրանց մասին չտեղեկանալու անձանց ցանկությունները հաշվի են առնվում:

3. Բացառիկ դեպքերում օրենքով կարող են սահմանվել 2-րդ կետում նշված իրավունքներն իրացնելու սահմանափակումներ՝ ելնելով բուժառուի շահերից:

Գլուխ IV. Մարդու գենոմը

Հոդված 11. Խտրականության բացառումը

Անձի հանդեպ գենետիկ ժառանգության հիմքով խտրականության բոլոր ձեւերն արգելվում են:

Հոդված 12. Կանխորոշիչ գենետիկական հետազոտությունները

Գենետիկական հիվանդություններ կամ սուբյեկտին որպես հիվանդություն առաջացնող գենի կրող նույնականացնելու կամ հիվանդության հանդեպ գենետիկական նախատրամադրվածություն կամ ընկալունակություն հայտնաբերելու կանխորոշիչ հետազոտություններ կարող են իրականացվել միայն առողջական նպատակներով կամ առողջական նպատակների հետ կապված գիտական հետազոտությունների համար եւ պատշաճ գենետիկական խորհրդատվության պայմաններում:

Հոդված 13. Միջամտությունները մարդու գենոմին

Մարդու գենոմի փոփոխությանն ուղղված միջամտություն կարող է իրականացվել միայն կանխարգելիչ, ախտորոշիչ կամ թերապեւտիկ նպատակներով եւ միայն այն դեպքում, երբ դա տվյալ մարդու ժառանգների գենոմը որեւէ փոփոխության ենթարկելու նպատակ չի հետապնդում:

Հոդված 14. Սեռի ընտրության արգելքը

Ապագա երեխայի սեռն ընտրելու նպատակով օժանդակ վերարտադրողական բժշկական տեխնոլոգիաների օգտագործումն արգելվում է՝ բացառությամբ սեռով պայմանավորված ժառանգական ծանր հիվանդությունից խուսափելու դեպքերի:

Գլուխ V. Գիտական հետազոտությունները

Հոդված 15. Ընդհանուր կանոնը

Կենսաբանության եւ բժշկության ոլորտում գիտական հետազոտություններն իրականացվում են ազատ կերպով՝ պահպանելով սույն կոնվենցիայի եւ մարդու պաշտպանությունն ապահովող այլ իրավական ակտերի դրույթները:

Հոդված 16. Հետազոտության ենթարկվող անձանց պաշտպանությունը

Մարդը հետազոտության կարող է ենթարկվել միայն հետեւյալ բոլոր պայմանները բավարարելու դեպքում.

- i. մարդկանց վրա հետազոտությունների համադրելի արդյունավետության այլընտրանք գոյություն չունի.
- ii. համապատասխան անձին սպառնացող հնարավոր ռիսկերը համաչափ են հետազոտության հնարավոր օգուտներին.
- iii. իրավասու մարմինը հետազոտական նախագիծը հաստատել է դրա գիտական արժեքի անկախ փորձաքննությունից, այդ թվում՝ հետազոտության նպատակի կարելիության գնահատումից եւ դրա էթիկական ընդունելիության բազմաառարկայական ուսումնասիրությունից հետո.

iv. հետազոտության ենթարկվող անձինք տեղեկացվել են իրենց իրավունքների եւ իրենց պաշտպանության համար օրենքով սահմանված երաշխիքների մասին.

v. 5-րդ հոդվածով նախատեսված անհրաժեշտ համաձայնությունը տրվել է հստակ եւ կոնկրետ եւ փաստաթղթավորվել է: Այդ համաձայնությունից հնարավոր է ցանկացած պահի առանց խոչընդոտների հրաժարվել:

Հոդված 17. Հետազոտությունը համաձայնություն տալու կարողություն չունեցող անձանց պաշտպանությունը

1. 5-րդ հոդվածով սահմանված համաձայնությունը տալու կարողություն չունեցող անձի հետազոտությունը կարող է իրականացվել միայն հետեւյալ բոլոր պայմանները բավարարելու դեպքում.

i. բավարարված են 16-րդ հոդվածի «i»-«iv» ենթակետերում նշված պայմանները.

ii. հետազոտության արդյունքները կարող են իրական եւ ուղղակի դրական ազդեցություն ունենալ նրա առողջության վրա.

iii. համադրելի արդյունավետության հետազոտություն հնարավոր չէ կատարել համաձայնություն տալու կարողություն ունեցող անձանց վրա.

iv. 6-րդ հոդվածով նախատեսված անհրաժեշտ թույլտվությունը տրվել է կոնկրետ եւ գրավոր. եւ

v. համապատասխան անձը չի առարկում:

2. Բացառիկ դեպքերում եւ օրենքով սահմանված պաշտպանության պայմանների համաձայն՝ այն դեպքում, երբ հետազոտությունը համապատասխան անձի առողջության համար ուղղակի օգուտ ունեցող արդյունքներ տալ չի կարող, այդ հետազոտությունը կարող է թույլատրվել, եթե բավարարված են վերոնշյալ 1-ին կետի «i», «iii», «iv» եւ «v» ենթակետերում նշված

եւ հետեւյալ լրացուցիչ պայմանները.

i. հետազոտության նպատակն է անձի վիճակի, հիվանդության կամ խանգարման մասին գիտական ընկալումն էապես խորացնելու միջոցով այնպիսի առավելագույն արդյունքներ ստանալը, որոնք կարող են օգուտ բերել համապատասխան անձի կամ նույն տարիքային խմբի կամ նույն հիվանդությունը կամ խանգարումն ունեցող կամ նույն վիճակում գտնվող այլ անձանց վրա.

ii. հետազոտությունը համապատասխան անձի համար միայն նվազագույն ռիսկեր եւ նվազագույն բեռ է առաջացնում:

Հոդված 18. Սաղմերի [էմբրիոն] վրա *in vitro* իրականացվող հետազոտությունը

1. Եթե օրենքով թույլատրվում է սաղմերի վրա *in vitro* [արհեստական պայմաններում] հետազոտություն իրականացնել, ապա դրանով պետք է ապահովվի սաղմի համարժեք պաշտպանություն:

2. Արգելվում է հետազոտական նպատակներով մարդու սաղմ ստեղծելը:

Գլուխ VI. Փոխպատվաստման նպատակներով կենդանի դոնորներից օրգան եւ հյուսվածք վերցնելը

Հոդված 19. Ընդհանուր կանոնը

1. Կենդանի անձից փոխպատվաստման նպատակներով օրգաններ կամ հյուսվածք կարելի է վերցնել բացառապես ռեցիպիենտի թերապևտիկ օգուտի համար եւ այն դեպքում, երբ մահացած անձից պիտանի օրգան կամ հյուսվածք վերցնել հնարավոր չէ, եւ երբ համադրելի արդյունավետություն ունեցող այլընտրանքային թերապևտիկ մեթոդ չկա:

2. 5-րդ հոդվածով նախատեսված անհրաժեշտ համաձայնությունը պետք է տրվի հստակ եւ կոնկրետ՝ գրավոր կամ որեւէ պաշտոնական մարմնի ներկայությամբ:

Հոդված 20. Օրգան վերցնելու համաձայնություն տալու կարողություն չունեցող անձանց պաշտպանությունը

1. Ոչ մի օրգան կամ հյուսվածք չի կարող վերցվել այն անձից, որը չունի 5-րդ հոդվածով նախատեսված համաձայնությունը տալու կարողություն:

2. Բացառիկ դեպքերում եւ օրենքով սահմանված պաշտպանության պայմանների համաձայն՝ համաձայնություն տալու կարողություն չունեցող անձից վերականգնողական հյուսվածք վերցնել թույլատրվում է՝ պայմանով, որ բավարարված են հետեւյալ պայմանները.

- i. համաձայնություն տալու կարողություն ունեցող համատեղելի դոնոր չկա.
- ii. ռեցիպիենտը դոնորի եղբայրը կամ քույրն է.
- iii. դոնորությունը պետք է ունենա ռեցիպիենտի կյանքը փրկելու պոտենցիալ.
- iv. 6-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերով նախատեսված թույլտվությունը տրվել է կոնկրետ եւ գրավոր՝ օրենքի համաձայն եւ իրավասու մարմնի հաստատմամբ.
- v. համապատասխան պոտենցիալ դոնորը չի առարկում:

Գլուխ VII. Ֆինանսական շահի արգելքը եւ մարդու մարմնի մասի տնօրինումը

Հոդված 21. Ֆինանսական շահի արգելքը

Մարդու մարմինը եւ դրա մասերը, որպես այդպիսին, չպետք է ֆինանսական շահի աղբյուր լինեն:

Հոդված 22. Մարդու մարմնից վերցված մասի տնօրինումը

Եթե միջամտության ընթացքում մարդու մարմնի որեւէ մաս է վերցվում, ապա այն կարող է պահվել եւ նախատեսված նպատակից տարբերվող՝ այլ նպատակով օգտագործվել միայն այն դեպքում, երբ դա արվում է տեղեկություններ տրամադրելու եւ համաձայնություն տալու պատշաճ ընթացակարգերի պահպանմամբ:

Գլուխ VIII. Կոնվենցիայի դրույթների խախտումները

Հոդված 23. Իրավունքների կամ սկզբունքների խախտումը

Սույն կոնվենցիայով սահմանված իրավունքների եւ սկզբունքների որեւէ անօրինական խախտում կանխելու կամ դադարեցնելու համար Կողմերը հնարավորինս սեղմ ժամկետում պատշաճ դատական պաշտպանություն են ապահովում:

Հոդված 24. Չարդարացված վնասի փոխհատուցումը

Միջամտության հետեւանքով չարդարացված վնաս կրած անձն օրենքով սահմանված պայմաններով եւ կարգով արդարացի փոխհատուցում ստանալու իրավունք ունի:

Հոդված 25. Պատժամիջոցները

Կողմերը նախատեսում են սույն կոնվենցիայով սահմանված դրույթները խախտելու դեպքում կիրառման ենթակա համարժեք պատժամիջոցներ:

Գլուխ IX. Կոնվենցիայի եւ այլ դրույթների միջեւ կապը

Հոդված 26. Իրավունքների իրացման վերաբերյալ սահմանափակումները

1. Սույն կոնվենցիայով նախատեսված իրավունքների եւ պաշտպանության վերաբերյալ դրույթների իրականացման նկատմամբ չեն կարող կիրառվել սահմանափակումներ՝ բացառությամբ այն սահմանափակումների, որոնք նախատեսված են օրենքով եւ ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ են՝ ելնելով հանրային անվտանգության շահերից՝ հանցագործությունները կանխելու, հանրային առողջությունը պաշտպանելու կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու համար:

2. Նախորդ կետում նախատեսված սահմանափակումները չեն կարող կիրառվել 11-րդ, 13-րդ, 14-րդ, 16-րդ, 17-րդ, 19-րդ, 20-րդ եւ 21-րդ հոդվածների նկատմամբ:

Հոդված 27. Ավելի լայն պաշտպանությունը

Սույն կոնվենցիայի որեւէ դրույթ չի մեկնաբանվում որպես որեւէ Կողմի՝ կենսաբանության եւ բժշկության նվաճումների կիրառման առնչությամբ սույն կոնվենցիայով սահմանված պաշտպանության միջոցներից ավելի լայն միջոցներ կիրառելու հնարավորությունը սահմանափակող կամ դրա վրա այլ կերպ ազդեցություն ունեցող:

Գլուխ X. Հանրային քննարկումը

Հոդված 28. Հանրային քննարկումը

Սույն կոնվենցիայի Կողմերը հետետում են, որ կենսաբանության եւ բժշկության ոլորտում նվաճումների հետ կապված հիմնարար հարցերը լինեն հանրային լայն քննարկման առարկա՝ հաշվի առնելով մասնավորապես համապատասխան բժշկական, սոցիալական, տնտեսական, էթիկական եւ իրավական հետեւանքները, իսկ դրանց հնարավոր կիրառումը համապատասխան խորհրդակցությունների առարկա դառնա:

Գլուխ XI. Կոնվենցիայի մեկնաբանումը եւ հետագա իրականացումը

Հոդված 29. Կոնվենցիայի մեկնաբանումը

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, դատական որեւէ կոնկրետ վարույթի ուղղակի հղում չկատարելով, կարող է ներկայացնել սույն կոնվենցիայի մեկնաբանմանն առնչվող խորհրդատվական կարծիքներ՝

- Կողմի կառավարության խնդրանքով՝ մյուս Կողմերին տեղեկացնելուց հետո.

- միայն սույն կոնվենցիայի Կողմերի ներկայացուցիչներից բաղկացած՝ 32-րդ հոդվածի համաձայն կազմված Կոմիտեի խնդրանքով՝ քվեարկությանը մասնակցած անդամների ձայների երկու երրորդով ընդունված որոշմամբ:

Հոդված 30. Կոնվենցիայի կիրառման վերաբերյալ զեկույցները

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարից պահանջ ստանալու դեպքում ցանկացած Կողմ ներկայացնում է բացատրություն այն մասին, թե իր ներպետական իրավունքով ինչպես է ապահովվում Կոնվենցիայի որեւէ դրույթի արդյունավետ իրականացումը:

Գլուխ XII. Արձանագրությունները

Հոդված 31. Արձանագրությունները

Սույն կոնվենցիայով սահմանված սկզբունքները կոնկրետ ոլորտներում զարգացնելու նպատակով 32-րդ հոդվածի համաձայն կարող են կնքվել արձանագրություններ:

Արձանագրությունները բաց են սույն կոնվենցիան ստորագրող Կողմերի ստորագրման համար: Դրանք ենթակա են վավերացման, ընդունման կամ հաստատման: Ստորագրող Կողմը չի կարող վավերացնել, ընդունել կամ հաստատել արձանագրությունները՝ առանց կոնվենցիան նախապես կամ միաժամանակ վավերացնելու, ընդունելու կամ հաստատելու:

Գլուխ XIII. Կոնվենցիայում կատարվող փոփոխությունները

Հոդված 32. Կոնվենցիայում կատարվող փոփոխությունները

1. Սույն հոդվածով եւ 29-րդ հոդվածով Կոմիտեին վերապահված լիազորություններն իրականացնում է Կենսաէթիկայի հարցերով ղեկավար կոմիտեն (ԿՀԵԿ, անգլ.՝ CDBI) կամ այդ նպատակով Նախարարների կոմիտեի կողմից նշանակված այլ կոմիտե:

2. Չսահմանափակելով 29-րդ հոդվածի կոնկրետ դրույթների գործողությունը՝ Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետություն, ինչպես նաեւ սույն կոնվենցիայի յուրաքանչյուր Կողմ, որը Եվրոպայի խորհրդի անդամ պետություն չէ, կարող է ներկայացված լինել Կոմիտեում եւ ունենալ մեկ ձայնի իրավունք, եթե Կոմիտեն իրականացնում է սույն կոնվենցիայով իրեն վերապահված լիազորությունները:

3. 33-րդ հոդվածում նշված ցանկացած պետություն կամ սույն կոնվենցիայի Կողմ չհանդիսացող՝ 34-րդ հոդվածի դրույթների համաձայն սույն կոնվենցիային միանալու հրավեր ստացած ցանկացած պետություն Կոմիտեում կարող է ներկայացված լինել որպես դիտորդ: Եթե Եվրոպական համայնքը Կողմ չէ, ապա Կոմիտեում այն կարող է ներկայացված լինել որպես դիտորդ:

4. Գիտական նվաճումների մոնիթորինգ իրականացնելու համար Կոմիտեն ոչ ուշ, քան սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հինգ տարի հետո, իսկ այնուհետեւ՝ Կոմիտեի կողմից սահմանված պարբերականությամբ ուսումնասիրում է սույն կոնվենցիան:

5. Որեւէ Կողմի, Կոմիտեի կամ Նախարարների կոմիտեի ներկայացրած՝ սույն կոնվենցիայում փոփոխություն կատարելու կամ արձանագրության առնչությամբ կամ դրա մեջ փոփոխություն կատարելու ցանկացած առաջարկ տրամադրվում է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին, իսկ վերջինս այն փոխանցում է Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին, Եվրոպական համայնքին, ցանկացած Ստորագրող կողմի, ցանկացած Կողմի, 33-րդ հոդվածի

դրույթներին համապատասխան սույն կոնվենցիան ստորագրելու հրավեր ստացած ցանկացած պետության եւ 34-րդ հոդվածի դրույթներին համապատասխան կոնվենցիային միանալու հրավեր ստացած ցանկացած պետության:

6. Կոմիտեն 5-րդ կետին համապատասխան Գլխավոր քարտուղարի կողմից փոխանցված առաջարկությունն ուսումնասիրում է ոչ շուտ, քան դա ստանալուց երկու ամիս անց: Կոմիտեն քվեարկած անդամների ձայների երկու երրորդ մեծամասնությամբ ընդունված տեքստը ներկայացնում է Նախարարների կոմիտեի հաստատմանը: Հաստատվելուց հետո տեքստը փոխանցվում է Կողմերին՝ վավերացման, ընդունման կամ հաստատման համար:

7. Ցանկացած փոփոխություն դա ընդունած Կողմերի առնչությամբ ուժի մեջ է մտնում դա ընդունելու մասին հինգ Կողմերի, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի առնվազն չորս անդամ պետությունների կողմից Գլխավոր քարտուղարին տեղեկացնելու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

Փոփոխությունը հաջորդիվ ընդունած ցանկացած Կողմի առնչությամբ դա ուժի մեջ է մտնում դա ընդունելու մասին տվյալ Կողմի կողմից Գլխավոր քարտուղարին տեղեկացնելու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

Գլուխ XIV. Եզրափակիչ դրույթներ

Հոդված 33. Ստորագրումը, վավերացումը եւ ուժի մեջ մտնելը

1. Սույն կոնվենցիան բաց է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների, դրա մշակմանը մասնակցած ոչ անդամ պետությունների եւ Եվրոպական համայնքի ստորագրման համար:

2. Սույն կոնվենցիան ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

3. Սույն կոնվենցիան ուժի մեջ է մտնում հինգ պետությունների, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի առնվազն չորս անդամ պետությունների կողմից սույն հոդվածի 2-րդ կետի դրույթներին համապատասխան Կոնվենցիայով նախատեսված պարտավորություններն ստանձնելու մասին իրենց համաձայնությունն արտահայտելու օրվանից հետո՝ եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

4. Ցանկացած Ստորագրող կողմի առնչությամբ, որը հաջորդիվ արտահայտել է Կոնվենցիայով նախատեսված պարտավորությունները ստանձնելու մասին իր համաձայնությունը, դա ուժի մեջ է մտնում դրա վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից հետո՝ եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 34. Ոչ անդամ պետությունները

1. Սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն Կողմերի հետ խորհրդակցելուց հետո կարող է հրավիրել Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող ցանկացած պետության՝ միանալու սույն կոնվենցիային՝ Եվրոպայի խորհրդի Կանոնադրության 20-րդ հոդվածի «դ» կետով նախատեսված ձայների մեծամասնությամբ ընդունված որոշման հիման վրա եւ Նախարարների կոմիտեի նիստերին մասնակցելու իրավունք ունեցող՝ Պայմանավորվող պետությունների ներկայացուցիչների միաձայն քվեարկությամբ:

2. Միացող ցանկացած պետության առնչությամբ Կոնվենցիան ուժի մեջ է մտնում Կոնվենցիային միանալու մասին փաստաթուղթը Եվրոպայի խորհրդի

Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու օրվանից հետո՝ եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 35. Տարածքները

1. Ստորագրելիս կամ վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթն ի պահ հանձնելիս ցանկացած Ստորագրող կողմ կարող է նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ սույն կոնվենցիան կիրառվելու է: Ցանկացած այլ պետություն Կոնվենցիային միանալու մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս կարող է կազմել նույն հայտարարությունը:

2. Ցանկացած Կողմ ցանկացած ժամանակ՝ ավելի ուշ ամսաթվի, կարող է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հասցեագրված իր հայտարարությամբ սույն կոնվենցիայի կիրառումը տարածել տվյալ հայտարարության մեջ նշված այլ այնպիսի տարածքի վրա, որի միջազգային հարաբերությունների համար կրում է պատասխանատվություն կամ որի անունից հանդես գալու իրավասություն ունի: Այդ տարածքի առնչությամբ Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդ հայտարարությունը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրվանից հետո՝ եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

3. Նախորդող երկու կետերի համաձայն արված ցանկացած հայտարարություն դրանում նշված ցանկացած տարածքի առնչությամբ կարող է չեղարկվել Գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցման միջոցով: Չեղարկումն ուժի մեջ է մտնում այդ ծանուցումը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրվանից հետո՝ եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 36. Վերապահումները

1. Ցանկացած պետություն եւ Եվրոպական համայնքը Կոնվենցիան ստորագրելիս կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու

մասին փաստաթուղթն ի պահ հանձնելիս կարող են Կոնվենցիայի ցանկացած կոնկրետ դրույթի առնչությամբ կատարել վերապահում այն մասով, որով այդ դրույթը հակասում է այդ պահին տվյալ պետության տարածքում գործող որեւէ օրենքի: Սույն հոդվածով արգելվում են ընդհանուր բնույթի վերապահումները:

2. Սույն հոդվածի համաձայն կատարված ցանկացած վերապահում պետք է պարունակի վերաբերելի օրենքի հակիրճ բովանդակությունը:

3. Ցանկացած Կողմ, որը սույն կոնվենցիայի կիրառումը տարածում է 35-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հայտարարության մեջ նշված տարածքի վրա, կարող է նախորդող կետերի դրույթներին համապատասխան տվյալ տարածքի առնչությամբ վերապահում կատարել:

4. Սույն հոդվածում նշված վերապահումը կատարած ցանկացած Կողմ կարող է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարության միջոցով չեղարկել այդ վերապահումը: Չեղարկումն ուժի մեջ է մտնում այդ հայտարարությունը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 37. Կոնվենցիայից դուրս գալը

1. Ցանկացած Կողմ ցանկացած ժամանակ կարող է դուրս գալ սույն կոնվենցիայից՝ դրա մասին Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցման միջոցով:

2. Կոնվենցիայից դուրս գալն ուժի մեջ է մտնում այդ ծանուցումը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրվանից հետո՝ եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 38. Ծանուցումները

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը խորհրդի անդամ պետություններին, Եվրոպական համայնքին, ցանկացած Ստորագրող կողմի,

ցանկացած Կողմի եւ ցանկացած այլ պետության, որին ուղարկվել է սույն կոնվենցիային միանալու հրավեր, ծանուցում է՝

ա. ցանկացած ստորագրման մասին.

բ. վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին ցանկացած փաստաթուղթ ի պահ հանձնելու մասին.

գ. 33-րդ կամ 34-րդ հոդվածներին համապատասխան սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելու ցանկացած ամսաթվի մասին.

դ. 32-րդ հոդվածին համապատասխան ընդունված ցանկացած փոփոխության կամ արձանագրության եւ այդ փոփոխությունը կամ արձանագրությունն ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին.

ե. 35-րդ հոդվածի դրույթների համաձայն արված ցանկացած հայտարարության մասին.

զ. 36-րդ հոդվածի դրույթների համաձայն կատարված ցանկացած վերապահման կամ վերապահումը չեղարկելու մասին.

է. սույն կոնվենցիային առնչվող ցանկացած այլ ակտի, ծանուցման կամ հաղորդակցության մասին:

Ի հաստատումն որի՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն կոնվենցիան:

Կատարված է Օվիեդո քաղաքում (Աստուրիա) 1997 թվականի ապրիլի 4-ին, անգլերեն եւ ֆրանսերեն, ընդ որում, երկու տեքստերը հավասարազոր են, մեկ օրինակից, որն ի պահ է հանձնվում Եվրոպայի խորհրդի արխիվ: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը վավերացված մեկական օրինակ փոխանցում է Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետության, Եվրոպական համայնքին, սույն կոնվենցիայի մշակմանը մասնակցած ոչ անդամ պետություններին եւ կոնվենցիային միանալու հրավեր ստացած ցանկացած պետության:

Վերապահում

Հայաստանի Հանրապետություն

Կոնվենցիայի 36-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ Կոնվենցիայի 14-րդ հոդվածով սեռի հատկանիշով երեխայի խտրական ընտրության բացառումը սահմանվում է հետեւյալ կերպ. *«Ապագա երեխայի սեռն ընտրելու նպատակով օժանդակ վերարտադրողական բժշկական տեխնոլոգիաների օգտագործումն արգելվում է՝ բացառությամբ սեռով պայմանավորված ժառանգական ծանր հիվանդությունից խուսափելու դեպքերի»*: Սույն դրույթը հակասում է «Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասին, համաձայն որի վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման դեպքում ապագա երեխայի սեռը պլանավորել չի թույլատրվում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է սեռի հետ կապված հիվանդության ժառանգման հավանականություն, կամ ընտանիքն ունի նույն սեռի 3 երեխա:

Հետեւաբար կոնվենցիայի 14-րդ հոդվածը չի կիրառվի Հայաստանի Հանրապետությունում վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության եւ ծառայությունների նկատմամբ:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 1997թ. ապրիլի 4-ին ստորագրված «Կենսաբանության և բժշկության նվաճումների կիրառման առնչությամբ մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին» կոնվենցիայի (Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին կոնվենցիա) հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**